Արձանագրություն 4

ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/73 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով տեխնիկական հսկողության ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 05.12.2019թ.
ժ.11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Հովսեփյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Հրաչյա Թարխանյան /գնահատող/
Արմեն Հակոբջանյան /գնահատող/
Խորեն Մնացականյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան
«ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Սուրեն Սալամյան
Բացակայում էր՝ Արմինե Ստեփանյան

1. Որակավորման փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին
(Հրանտ Հովսեփյան)

1.1 «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրած անհամապատասխանությունները շտկել է մասնակի, չի շտկվել «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող անհամապատասխանությունը:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

2. Գնահատման արդյունքների մասին
(Հրանտ Հովսեփյան)

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.2 կետով ընդունված որոշումը՝ մերժել «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի հայտը:

2.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 45-րդ կետը՝ «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի տվյալները, ներառյալ համապատասխան հիմքերը, ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

3. Գնման գործընթացը չկայացած հայտարարելու մասին
(Հրանտ Հովսեփյան)

3.1 ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/73 ծածկագրով գնանշման հարցումը, «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա՝ հայտարարվում է չկայացած, հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

Հ. Հովսեփյան /նախագահ/

Հ. Թարխանյան

Ա. Հակոբջանյան

Խ. Մնացականյան

Ա. Սողոմոնյան /քարտուղար/